ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2

ք. Երևան «27» 06 2019թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Տ. Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Համաշիննախագիծ>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Մեսրոպյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԱԺ վարչական շենքի երկրորդ շերտ պատուհանների նորով փոխարինման և երկրորդ շերտ պատուհանների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը[1]:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1780000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

---

[1] *Սույն պայմանագրի նախագծի 2.4.4 կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները:*

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի պարտավորությունները կստանձնվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կկատարվի համապատասխան Պայմանարի 3.1.1 կետով՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին[3]:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:*

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ **ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19** **ՀՎՀՀ 00008519** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Հ/Հ 900011020089** **ՀՀ ԱԺ աշխատակազմի** **ղեկավար–գլխավոր քարտուղար** **Տ. Գալստյան**	**<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ** **ք. Եղվարդ,Սաֆարյան 3 նրբ 8տ** **ՀՎՀՀ 03309254** **Արդշինբանկ Նաիրի մ/ճ** **Հ/Հ 247370100411** **Տնօրեն՝** **Հ.Մեսրոպյան**
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ (ստորագրություն) Կ.Տ.

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 27 » 06 2019թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/Հ դրամ	ընդհանուր քանակը	կատարման: հասցեն	կատարման: ժամկետը**
1	71241200/501	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ** **ՀՀ ԱԺ վարչական շենքի երկրորդ շերտ փայտե պատուհանների նորով փոխարինման և երկրորդ շերտ պատուհանների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ** **Նախագծվող կառույցի բնութագիրը-** ՀՀ ԱԺ վարչական շենքի երկրորդ շերտ փայտե պատուհանների փոխարինում նորով և երկրորդ շերտ պատուհանների տեղադրում **Նախագծի տեսակը-** ՀՀ ԱԺ վարչական շենքի երկրորդ շերտ փայտե պատուհանների փոխարինում նորով և երկրորդ շերտ պատուհանների տեղադրում՝ աշխատանքային նախագծի կազմում, չափագրում, Պատվիրատուի հետ թերությունների ակտի կազմում, որի հիման վրա կատարել նախագծա-նախահաշվային աշխատանքներ: Նախագիծը կազմել համակարգչային ծրագրով: **Նախագծի կազմը-** ՀՀ ԱԺ վարչական շենքի երկրորդ շերտ փայտե պատուհանների փոխարինում նորով և երկրորդ շերտ պատուհանների տեղադրում՝ աշխատանքային նախագծի կազմում, չափագրում, մասնագիտական հաշվարկ, Պատվիրատուի հետ թերությունների ակտի կազմում: Աշխատանքային նախագծի կազմում, լոկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ (5-ական օրինակ կրիչով): Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ստացում: **Ճարտարապետա-հատակագծային և ինժեներական լուծումներ-** Տեղում չափագրման և ուսումնասիրության հիման վրա կատարել հաշվարկներ և տալ համապատասխան լուծումներ, վթարային վիճակում գտնվող երկրորդ շերտ փայտե պատուհանները ապամոնտաժել և փոխարինել նոր պատուհաններով, երկրորդ շերտ պատուհանների տեղադրում: Նախատեսել պատուհանները մետաղապլաստե՝ հայկական կամ արտասահմանյան պրոֆիլներով, կաղնեգույն, ապակե փաթեթով 4+4 (մմ), բացվող /չբացվող, գոյություն ունեցող փայտե պատուհանագոգի հղկում, լաքապատում և վերատեղադրում /ըստ պատվիրատուի պահանջի/: Մեխանիզմները MACO , բռնակները HOPPE : Արտաքին և ներքին շեպերի վերականգնում և հարդարում:	դրամ	800000	800000	1	Ք. Երևան, Մ.Բաղրամյան պող 19	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օր

		Այլ պահանջներ- Նախագիծը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Շինանյութերի գնահատումներն իրականացնել համաձայն «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նկարագրել նախագծում, նախահաշվում, ծավալաթերթում առավել մանրամասն և սպառիչ: Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ- *Հիմնավորում* Պատվիրատուի պահանջներին համապատասխան *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք - ԳՕՍՏ 32836-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային ճանապարհների հետազննում: Ընդհանուր պահանջներ: ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշման Հավելված 8 - Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը: 4.ԳՕՍՏ 33100-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային ճանապարհների նախագծման կանոնները:						
		ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ **ՀՀ ԱԺ վարչական մ/շ, տնտեսական մ/շ և ավտոտնտեսության ջեռուցման ցանցերի, ջեռուցման արտաքին ցանցի և ջերմային կամերայի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ** **Նախագծվող կառույցի բնութագիրը-** Գոյություն ունեցող հին մ/շ, տնտեսական մ/շ, ավտոտնտեսության ջեռուցման համակարգի վերակառուցում՝ համաձայն պատվիրատուի առաջադրանքի:Ջերմային կամերայից /խցիկից/ մինչև տնտեսական մ/շ տանող ջեռուցման արտաքին ցանցի վերանորոգում , ջերմային կամերայի վերանորոգում : **Նախագծի տեսակը-** Աշխատանքային նախագծի կազմում՝ չափագրում, Պատվիրատուի հետ թերությունների ակտի կազմում: Նախագիծը կազմել համակարգչային ծրագրով:					Ք. Երևան, Մ.Բաղրամյան պող 19	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օր

2	71241200/502	**Նախագծի կազմը-** Գոյություն ունեցող հին մ/շ, տնտեսական մ/շ, ավտոտնտեսության ջեռուցման ցանցի վերակառուցման, արտաքին ցանցի վերանորոգման աշխատանքային նախագծի կազմում : Վթարված ջերմային կամերայի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական եզրակացության ստացում, Պատվիրատուի հետ թերությունների ակտի կազմում, լոկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ (5-ական օրինակ կրիչով): Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ստացում: **Ինժեներական լուծումներ-** Գոյություն ունեցող մասնակի վերանորոգված ջեռուցման համակարգը գտնվում է վթարային վիճակում և դժվարացնում է Պատվիրատուն: Արտաքին ցանցի ջերմային խցիկից մինչև տնտեսական մասնաշենքը մետաղական խողովակները շարքից դուրս են եկել և ենթակա են փոխարինման /L=75մ հեռավորությամբ/: Ջերմային կամերայի մասնագիտական եզրակացության հիման վրա ամրացման խնդրի լուծում: Քարե պատերի շար կանոնավոր Արթիկ տուֆ քարով 30սմ հաստությամբ /8x1.2x0.3/, միաձույլ երկաթ-բետոնե գոտու իրականացում, ամրանավորում ըստ կոնստրուկտիվ հաշվարկի, ապամոնտաժված երկաթ-բետոնե հավաքովի սալերի մոնտաժում: Վերանորոգման ընթացքում քանդված և վնասված սալվածքները, ասֆալտբետոնե ծածկույթը նախատեսել վերականգնում: **Այլ պահանջներ-** Նախագիծը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Շինանյութերի գնահատումներն իրականացնել համաձայն «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նկարագրել նախագծում, նախահաշվում, ծավալաթերթում առավել մանրամասն և սպառիչ: **Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ-** *Հիմնավորում* Պատվիրատուի պահանջներին համապատասխան *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք - փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն - ՀՀՇՆ ^-11.05.02-99 - Ավտոմոբիլային ճանապարհներ:	դրամ	980000	980000	1	Ք. Երևան, Մ.Բաղրամյան պող 19	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օր

		- ԳՕՍՏ 32836-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային ճանապարհների հետազոտում: Ընդհանուր պահանջներ: ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշման Հավելված 8 - Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը: 4.ԳՕՍՏ 33100-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային ճանապարհների նախագծման կանոնները:						

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
ք. Եղվարդ,Սաֆարյան 3 նրբ 8տ
ՀՎՀՀ 03309254
Արդշինբանկ Նաիրի մ/ճ
Հ/Հ 247370100411
Տնօրեն՝
Հ.Մեսրոպյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«27» 06 2019թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«27» 06 2019թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (Պատվիրատուի անունը)-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (Կատարողի անունը)-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N _____ (պայմանագրի համարը) գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

27.06.2019թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան **«16» 09 . 2019թ.**

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Տ. Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու)՝ մի կողմից, և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Լևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 27.06.2019թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը և ՀՀ կառավարության 29.08.2019թ. թիվ 1145-Ն որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1Հաշվի առնելով Պայմանագրի 4.1 և 4.1.1 կետերը՝ Կողմերը որոշեցին աշխտանքի ձեռքբերման նպատակով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն՝ կից ներկայացված Հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	Համաշիննախագիծ» ՍՊԸ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19	Ք. Եղվարդ, Սաֆայան փ 3-րդ նրբ 8
ՀՎՀՀ 00908519	Արդշինբանկ ՓԲԸ, Նաիրի մ/ճ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 247370100411
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ՝ 03309254
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝	Տնօրեն Հ.Լևոնյան
Տ. Գալստյան	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» հունիսի 2019թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի
« 16 » « 09 » 2019 թ. կնքված Համաձայնագիր N1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը /4241/	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71241200/501	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	-	-	-	-	-	-	-	-	800000	800000	800000	800000	800000
2	71241200/502	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	-	-	-	-	-	-	-	-	980000	980000	980000	980000	980000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տ. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Համաշիննախագիծ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Սաֆայան փ 3-րդ նրբ 8
Արդշինբանկ ՓԲԸ, Նաիրի մ/ճ
Հ/Հ 247370100411
ՀՎՀՀ՝ 03309254
Տնօրեն Հ.Լևոնյան

(ստորագրություն)
Կ.Տ